

Kaiser Wilhelm 649 **առք ըլլալով** (246 մեյր) շատ աւելի երկայն է վիթխարի տու- նէն: Իսկ գաղղիական Թարնագաղլանդիկ ըն- կերութեան ամենամեծ շոգենաւին երկայ- նութիւնը 546 **առք կամ** 172 մեյր է: Բառք իւրի շէնքը 12 միլիոն արծած է բոխնք, իսկ շոգենաւը 20 միլիոն: Այս տար- բերութեան պատճառներէն մին՝ շոգենաւի մեքենաներուն սուղ ըլլալն է, որ 27.000 ձիու ոյժ պէտք է ունենալ, մինչդեռ Նիւ Էօքսքի հրէշ տան ելեկէի և լուսաւորութեան համար 1.000 ձիու զօրութիւն՝ առաւելան հան- դերէ կը բաւէ, միւս կողմանէ, շաղախը և աղիւսը նուազ կ'արժէ քան զպողպատ:

Միւնչն հիմայ ամենայն ինչ յաջող է, բայց կը քնայ լուծելիք կարեւոր խնդիր մ'ալ, և շատ կարեւոր: Քանի մը ամիս առաջ այս վիթխարի տններէն մին կրակ առաւ: Իս- կոյն ջրհանկիրները հասան արկածալայրը: Բայց զորադպարաւ տեսան որ ջուրը մեքե- քենայով հագիւ մինչն ութերորդ յարկը կը բարձրաւոր: Պաշտօնեայք իրենց կրցած ճիւղ թափեցին, բայց աշխատութիւննին տ- պարդին ըլլալով, ջրկառնին հրամանատարը վհատելով, իրեն յուսահատ մարդկանց գոչեց. «Տղաք, ձգեցէք որ այրի»:

Եւ յիրաւի ասկէ զուրա ուրիշ բան չէին կրնար բնել: Չայս տեսնելով, այժմ ամե- րիկեան ջրհանկիրներու տեսուչները կը պա- հանջեն որ ըուէարկութեամբ օրէնք հաս- տատեն և արդելուն վիթխարի տներ շի- նելը: Կանխէնք ըսելու որ պիտի չյա- ջողին, որովհետև Ամերիկացիք սաստիկ սի- րահարուած են այս տեսակ նորութեանց, որոնք իրենց սեփական են: Բայց ինչ որ ալ ըլլայ, պէտք են մտածել հնարք մը, որով արդիւնք իրենց հրէշային շէնքերը մո- մերու պէս այրելէ:

ԲԻԻՐԱԿՆ

— Կը հրա- տարակէ բանասիրական, տեղագրական, ազգագրական, յօդուածներ: Խմբ. Ս. Դաշ- քեան. — Գինն է 12 ֆռ.:

Հասցէ Direction du «Paraghn» Baht- ohé kapou kazasker han N. 16 CONSTAN- TINOPLE.

Գ Ա Ղ Ա Բ Ա Վ Ա Ն Ա Մ Ի Ս

20 Մ Ա Ր Տ

Ա Ն Գ Ղ Ի Ա

Անգղիացիք ի Սուտան. — Ներկայիս՝ Անգղիացիք ուրախալի կացութեան մէջ չեն գտնուիր՝ նկատմամբ Սուտանի: Կարծեք էին թէ Սուտան ընդ միշտ տիրապետուած էր, թէ Խալիֆան փախեւ էր անդառնալի կեր- պով, հետևաբար և Լոնտրայի մէջ՝ սիրտաւ Բիշընըրը ընդունուած էր լատին ցեղի յա- տուկ խանդավառութեամբ և անգղիական վե- հանձնութեամբ մը, քանի մ'օրուան մէջ ե- դիւր էր Լորտ, գուքս և միլիոնատէր: Բայց ահա սոսկալի գոյժը. Խալիֆան դեռ ողջ է, և 18,000 զօրաց բանակով մը կը զառնայ նորէն Անգղիացւոց վրայ, ու նոյն իսկ կը ստիպէ թողուլ հեռանալ ընդհանուր Սպա- րապետին համանուն հղբայրը, որ նախ Գա- հիրէ և յետոյ կ'անցնի Լոնտրա: Տարակոյս չկայ որ նորէն պիտի յաղթեն անոր. բայց եթէ սոյն դէպքը պատահէր այն այլասե- րուած և շաղակաւ տախններուն, որպիսի ծծածաղ պիտի պատճառէր Անկլո — սաքսոն- ներուն, որոնք միայն զուցէ ներսուած էր՝ Օմտուրմանի պատերազմին մէջ կատարել «ծայրագոյն անգլութիւններ, որ երբեք պա- տերազմի մը մէջ զօրծուած ըլլան»: Նե- րկիք էր իրենց գերեզմանէն հանել Մահաթի դիակը, նետել անոր մարմինը գետի մէջ, և զուիւրը զրկել ի զարդ Բիթուանական Թան- զարանին: Ասոնք զօրաւոր ազգերու կատակ- ներ են, որոնք խորհրդարանն անգամ կը հաւանին: Բայց կարծել թէ պատերազմը ար- դէն իսկ լնցած է, մինչդեռ նոր կը սկսի, կէս ճամբուն վրայ ըուէարկել յաղթանակը... տիւր իրականութիւն, որ արժանաւոր չի թուիր բարձրագոյն ցեղերու. և սակայն ուսմ,

կազմարական թերթերն կը հրատարակեն լատին ցեղը՝ հետեիլ անոնց օրինակին։

Պափր-էլ-կալէլ. — Տէյլի Մէյլ թերթին ըսածին նայելով, Պահր-էլ-Էյաշէի խնդիրը մօտեորս պիտի կարգադրուի։ Գաղղիա պիտի հրաժարի այդ հողէն, մինչդեռ Անգլիա, իր կողմանէ, ետ պիտի կենայ՝ Մատակապարի մէջ իր ունեցած քանի մը առանձնաշնորհութիւններէն։

Անդրափրիկեան Երկամողին. — Սեփի Ռատըն, որ Գաբի մէջ անգղիական Ռոտթ-զեա նոր գաղթականութեան հիմնադիրն է, այն որ նուազ բազմով կուտեցաւ Դրանզիալի Պոնքերներու գէմ, ամսոյս մէջ գնաց ի Պեռլի՝ ընդունելու համար Գերմանիոյ հաւանութիւնը, թրպէս զի մտադրուած արհիկեան երկամողուոյ գիծը, որով Եգիպտոս պիտի միանայ Գաբի գաղթականութեան հետ, կարենայ անցնիլ արեւելեան Ափրիկէի գերման գաղթական երկրին մէջէն։ Ինչպէս յայտնի կը տեսնուի, բազաբական, տնտեսագիտական եւ գաղթական շահերու խնդիր մ'է այս, որ երկու տերութիւններու համար ալ մեծ կարեւորութիւն ունի։ Ելըստի թէ Պոնքերներու գիտնագիտական շրջանակաց շատ հաճոյ երեցեք է սոյն առաջարկութիւնս։

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Քրոլման Ելի պաշտօնարանը. — Հունգարիոյ ճգնաժամը վերջնականապէս լծցաւ Պանֆիի հրաժարելով եւ Քրոլման Սլէի ընտրուելով ի գլուխ պաշտօնարանի մը, որուն մէջ ձեացին դարձեալ նախկին զբոյժ թուր պաշտօնեաները։ Դեռ նախապահութիւնը չստանձնած, Սլէ համաձայնութեան մը եկեք էր ընդդիմականներու հետ, որոնք այլ եւս պիտի չլիզոյն խօսարանին ազատ պաշտօնավարութիւնը։ Եւ երբ Սլէ ներկայացաւ խօսարանին մէջ, ազգային կուսակցութիւնը յայտարարեց միանայալ այսուհետեւ ազատական կուսակցութեան հետ, որուն աջակցութեամբ Սլէ պիտի կարենար կառավարել ինչպէս Պանֆի։ Միւս կուսակցութեանց զուգահեռ, իրենց ծրագրին հաւատարմութիւնը միայն չհաղթեց, յայտարարեցին տեսնել ի Սլէ՝

խաղաղութեան երաշխաւորութիւն մը։ Մարտ 12ին Սլէ ընդունելով իրեն խնդակցութեան համար եկող երեսփոխանները, փափաք յայտնեց որ ոչինչեւ խաղաղութիւնը տեսական ըլլայ, որով խօսարանն ալ կարենայ օգտակար գործով մը զբաղիլ։ Վարչութեան ծրագիրն է, յարեց Սլէ, հաւատարմութիւնը երկուսութեան սկզբունքին (dualisme), ազատական սկզբունքներու պահպանութեան, եւ ստանալ սահմանադրապէս Աւստրիոյ հետ իրաւաստութեան մը ելքը՝ մինչեւ 1904 տարւոյն վերջը, 1867ի դաշինքին հիման վրայ։ Մի եւ նոյն յայտարարութիւնները Աւագաց խօսարանին մէջ ալ ըլլալով ծափահարութեամբ ընդունուեցան։

Քրոլման Սլէ երեսփոխանը, նորքնաբեր նախագահ ժողովին, Հունգարիոյ ամենէն զիտուն եւ կորովի քաղաքագէտներէն մէկն է։ Արդէն երկու անգամ պաշտօնեայ եղաւ եւ Լեմաուքի, զոր արդեամբ կարգաւորեց։ Մեծ համակրանք կը վայելէ ազատական կուսակցութեան մէջ, որ շատոնց ի վեր զինքը վարչութեան գլուխ սահմանած էր, եթէ Պոնքերն եւ Էրզեկովիին զբաւման խնդիրը զինքն իշխանութենէ հեռու չպահէր, որուն պատճառաւ՝ իր եւ կայսեր մէջ գտնութիւն մը ծագած էր։ Բայց հիմայ որ գտնութեան դոյզն առիթ մ'ալ չկայ, եւ տերութիւնը հարկաւոր կը համարի ամենուն համաձայնութիւնը, կայսրը հրապարակեց Քրոլման Սլէ՝ գործերու գլուխ եւ վարիչ։

Գ Ա Ղ Ի Ա

Ընտրութիւն նոր նախագահին. — Փեւտրուար 18ին, Վերսայլի մէջ գումարուելով Գաղղիոյ մեծ ժողովը, որ կը բաղկանայ 300 ձեռակոյտի անգամ է 584 երեսփոխաններէ, — որոնցմէ միայն 814 ներկայ էին ժողովքին մէջ, — ձեռակոյտի նախագահը՝ Լուպէ, ընտրուեցաւ նախագահ Հասարակապետութեան՝ 483 քուէով։ Միւսին ստացաւ 279 քուէ։

Լուպէ. — Վարմանամեայ ձերունի մ'է Լուպէ, ծնած գեկտեմբեր 31ին 1838ին, Տրոմ նահանգին՝ Մարտան գիւղին մէջ,

ուր ցարդ կ'ապրի իր 86 տարեկան պառաւ մայրը: Քառասանեայ՝ պսակաւոր հանդիսաւ նալով օրէնսդիտութեան մէջ, հաստատեց իր բնակութիւնը ի Մոսկուի մար, իր ծննդավայրէն 15 բիւրմեայր հետու, ուր փաստաբանութեան պաշտօն վարեց, հոն յետոյ ընտրուեցաւ շահապ, հոն ընտրուեցաւ նաև երեսփոխան 1876ին, առանց իրեն մրցակից մ'ունենալու, հոն ամուսնացաւ փիքար օրիորդի մը հետ, ուսկից ունեցաւ երեք որդի, հոն, վերջապէս, շինել տուաւ չափաւոր առևտրով տուն մը՝ ուր մինչև նախագահութեան նախընթաց օրը կը բնակէր, և ուր անշուշտ իր հանգստեան օրերը պիտի վերադառնայ, վասն զի շատ կը սիրէ այդ երկիրը, ուր ինքը ժողովրդեան ամենամեծ համակրութիւնը կը վայելէ, ամենուէն հետ ընտանեքար կը խօսի, ամենուէն ձեռքը անխորի սեղմելով:

Հազիւ խօսարանի մէջ մտաւ, նստաւ ձախակողմը՝ յառաջադէմ հասարակապետականներու մէջ: Ինքն ալ այն 363 յառաջակիական երեսփոխաններէն էր, որոնք 1877 Մայիս 16ին՝ Կամպեղղայի առաջնորդութեամբ ըուարկեցին Պրոյնի պաշտօնարանին դէմ. որով Մարք-Մահոն մարաշախտը որոշեց լուծել խօսարանը, ձեռք զարնելով յետ ընդդէմ քաղաքականութեան մը, որով սոսալիկն Լէոն Կամպեղղայ մարաշախտ նախագահին դէմ սա նշանաւոր ազդարարութիւնն ըրաւ. «Կամ հպատակիլ կամ հրաժարիլ»:

Լուպէ քիչ ատենէն գործունեայ, եռանդուն, սքաւիտ և ճարտար մարդու համարուեալ ստանալով, պաշտօնարանի մէջ մտաւ, և հետզհետէ եղաւ նախ ենթաքարտուղար և յետոյ պաշտօնեայ ներքին գործոց Ռիպոյի առաջին պաշտօնարանին մէջ գործակալ նոյն դերը կատարեց: 1894ին յաճն առաւ ժողովի նախագահութիւնը, բայց 93ին՝ Տիւփուիկէն պարտուելով ինկաւ: Այն ատեն իրեն շատ փասեց իր երկրի ընթացքը փառամայի խնդրոյն նկատմամբ: Ամբաստանուեցաւ՝ ոչ թէ ինքն ալ մասն ունենար այդ պարտու գործին մէջ, այլ որովհետև ուզեր էր պաշտել մեծ անձնաւորութիւններ: Այս պատճառաւ վերսպլի ժողովին մէջ, հայրենա-

սիրաց Դաշնակցութեան նախագահ՝ եռանդուն Տերուկտը, յետ յայտարարելու սր ինքը չէր ըուարկեր, որովհետև հասարակապետութեան նախագահը պետք էր ընտրուիլ ժողովրդեան ըուէով, Լուպէ ակնարկելով ըսաւ. «Իսկ դու, Պ. Լուպէ, դու փանամալիստ (panamiste) ես» Զմոռնանք յիշելու որ Լուպէ այդ փանամալի խիստ կուռոյն մէջ, 1892 նոյեմբ. 17ի նշանաւոր նիստին մէջ պաշտպանեց ինքզինքը Լա Հէյի դէմ՝ որ զինքը տկար ու երկչոտ կ'անուանէր: Դեռ պաշտօնանկ չեղած, Ռիքար կնքապետին հետ համաձայն, առաջարկեց օրէնք մը, որուն նպատակն էր բարեփոխել տպագրական օրէնքը, կանխարգել զգուշութիւններ և պատիւներ հաստատելու համար ընդդէմ ոմիրներու՝ զրգոյք առ գողութիւն, մարդասպանութիւն, կողոպուտ, հրդեհ, և զինուորականներն իրենց պարտքին մէջ պակսելու թելադրութեան: Ահա այս օրէնքը իրեն դէմ կուտեց հակակրութիւնները հայրենասէրներու, զինուորական դասուն, և ստորակարգ տպագրողաց մեծամասնութեան: Եւ վերջապէս ինկաւ զինուորականաց անէմքներուն և Ռոշֆորի նախատինքներուն տակ:

Խօսարանեակն խողովայնոյ աղմուկները թողլով՝ ձերակոյտի տակի հանգարտ փառքին համար, Լուպէ հոն իսկոյն ստատաւ այն բարոյական ազդեցութիւնը, զոր իր հաւասարակշիռ բնաւորութեան համար, վայելք էր խօսարանի միւս ճիւղին մէջ: Շաշմէ Լաքուր հրաւարելով, Լուպէ հրաւարուեցաւ իրեն յաջորդելու: Եւ այսպէս 96էն սկսեալ եղաւ նախագահ ձերակոյտի ժողովին, կամ լաւ և բւել, Հասարակապետութեան նախագահէն յետոյ՝ առաջին բարձրաստիճան քաղաքացին: Քայլ մը միայն կը պակսէր իրեն՝ վերջին պաշտօնին հասնելու, և այդ քայլը ըրաւ. — Երեակոյտի նախագահութեան մէջ՝ իրեն յաջորդեց Պ. Ֆալիէ՝ երեքմիս — պաշտօնեայ:

Նոր նախագահին պատգամագիրը. — Երեակոյտի և խօսարանի մէջ մեծ ծափահարութեամբ տեղի ունեցաւ նոր նախագահին պատգամագրին ընթերցումը, յորում Լուպէ կը հրաւիրէ երկու ժողովներուն ա-

ջակցութիւնը. կ'ըսէ թէ իշխանութիւններու փոխանցումը կանոնաւորապէս կատարուելով «այն վայրկեանին» երբ քանի մը մուրեքայնեք (quelques égarés) կը շանան ցնցել Հայրեւնեաց վաստակութիւնը իւր հիմնական օրէնքներուն մէջ», կը հաստատէր Գաղղիոյ հաւատարմութիւնը առ Հասարակապետութիւն: Փետրուար 18ի ժողովը պայծառ կերպով ցուցուց փափաքն՝ ողինքնու խաղաղացումը իրականացընելու և տեական ընելու բոլոր հասարակապետականներո՞ւ միտքները: Եւ խաղաղահիմ յաւատեալ հոգի պիտի ըլլայ՝ խօսարարին օգնելու, այս՝ Թոյլտուութեան և Համաձայնութեան հարկաւոր գործոյն մէջ... Պատգամագիրքը կը լմննայ ըսելով որ՝ Գաղղիա, տպահով ինքն իր վրայ, պիտի կարենայ յառաջ ապահով իր խաղաղ գործը աւելն ապարելնեքուն մէջ ևս: Հասարակապետութիւնը Գաղղիոյ ապահովեց ազատութիւն և խաղաղութիւն, հիմնեց գաղթականական մեծ իշխանութիւն մը, ստացաւ թանկագին գաղտակցութիւններ և բարեկամութիւններ: Պէտք է ուրեմն զարգացընել այս գործը:

Բոլոր այս խօսքերս անշուշտ ճարտասանական տողերէ գոյս չեն ելլեր. բայց այնպիսի նորութիւններ կը տեսնուին մէջը, որ պարկեշտ ու հաստատմիտ մարդու մը բնադրողմը կը յայտնեն:

Տերուլեանի յիմարութիւնը. — Ֆելիքս Ֆորի թաղման հանդէսէն վերջ, զինուորական գունդերը ետ դառնալու ժամանակ, Տերուլեան փորձեց ապստամբութեան յորդորել Ռոմէ զօրավարը, և համոզել զինքը իր քնքով իշխելու վրայ զինքին, բաւական չէր այս. յիմարութեամբ մտաւ զինուորանոց, զինուորներու առջև հրապարակախօսութիւն մ'ընելու համար: Հետեանքը այս եղաւ որ ինքը բանտարկուի և յետոյ գատաստանի ենթարկուի: Այսպէս յետ երկար առնել գահաւէժին եղբայր վրայ երեքալու, վերջապէս ինկաւ հոն:

Տրէֆուսի խնդիրը. — Մարտի սկիզբներէ Հայքահայի նոր յայտարարութիւններ հրապարակեց Տէյլի Քրոնիքլ անգլիական թերթին մէջ, ամբաստանելով Քալիֆնաք պատերազմի նախկին պաշտօնեայն, որ

Տրէֆուսի խնդրոյն մէջ՝ զաղափար ունեցեր էր՝ զինուորական դասակարգէն բարձրագոյնները ազատելու համար՝ զոհել փոքրաստիճանները՝ և այս լուրը թէ ի Լոնտոն և թէ ի Գաղղիա հասարակաց կարծիքն զրաւած է: Այս յայտարարութեանց համեմատ Հանրի որդայթի մէջ բռնուած է, մինչդեռ ետեւէ էին կալանաւորելու նոյն իսկ զինքը Հայքահայի, որ յալոդեցաւ ազատիլ հրաշքով: Փալթի տիւ Գլաւմ ևս ազատեցաւ իր ազգականներուն ձեռքով: Հայքահայի կը սպասէ զեռ աւելի մեծ յայտնութիւններ ընել վճռաքնին առնինքն ընդհանուր գումար ման առնել, առ այսմ պարզելով թէ ինչպէս սպայակոյտը կը խաղաղախել օտար զինուորականներու նամակները, և թէ ինչպէս զրեւթէ բովանդակ ապայակոյտը տեղեակ էր Փանիծմարտի նամակին խաղաղախել ըլլալուն: Մկուստեֆըր ամենէն աւելի վտանգեալն է, և կ'երևի թէ անխուսափելի է փալթի տիւ Գլաւմի դէմ գատ մը:

Մարաթի խնդիրը. — Անգղիոյ և Գաղղիոյ միջև նոր խնդիր մ'ալ ծագեցաւ նը. կատամբաւ մօտիս շտեմարանին զոր կ'ուզէր ունենալ վերջինս Մարաթի ծոցին մէջ: Շատ յոռեաններ շուտափոյթ վճռով մը համարեցին զայս Գաղղիոյ համար երկրորդ Ֆաշտա մը. բայց բարեբաղդաբար խնդիրը շուտով խաղաղ լուծման մը յանգեցաւ: Միայն թէ Գաղղիացիք շատ զսոհակու թիւն կը ցուցնեն՝ իւր թէ զինագիտական մեծ յալոդութիւն մ'ունեցած ըլլալին, որ տակալն այնքան մեծ չ'երևի՝ ի նկատի առնելով Պրոտրիքի հետեանք յայտարարութիւնը թէ «Անգղիա չ'արգելուր Գաղղիոյ» ունեւնալու օտխոյ մթերանոց մը Մարաթի մօտ, միայն թէ առանց հոգային շնորհումի ըլլայ այն»:

Ֆրէյսիլի մարտը. — Պատերազմի հաշուեցոյցի վիճաբանութիւնը առիթ տուաւ Ֆրէյսիլին՝ գովութեամբ հռչակելու Գաղղիոյ բանակին իւր կազմակերպութիւնը, մանաւանդ հրետանին, որ ներկայապէս կրնայ համարուիլ առաջին և «անմասն» բոլոր աշխարհին մէջ: Ֆրէյսիլն նպատաւոր կը ցուցնէ ինքզինքը սա ոկգրունքին որ, Գաղ-

դիոյ պիտուութիւնը հասած ըլլալով իր մեծագոյն իտեական թուին (Maximum d'effectif), — գրեթէ 600000 —, ասկէ վերջ պէտք է բարուրել անոր յատկութիւնը և ոչ թէ բանակութիւնը:

Լըբրուայի նաւը. — Մարտ 17ին, Լըբրուա՝ ծովային զօրութեան պաշտօնեայն ևս նոյնպիսի յուսալիր յայտարարութիւն մ'ըրաւ խօսարանին մէջ: Ենթամովային նաւերու խնդիրը, կ'ըսէ նա, վնասակա՛ն քայլ մ'ըրաւ, որովհետեւ այսօրուան օրս Գաղղիա ունի նոյն պիսի նաւ մը «Թանկագին և սոսկալի մեքենայ», որ ոչ միայն կարող է յարձակուողականը ընել, այլ նաեւ տեսնել թշնամի նաւը և անտեսանելի մնալ անկէ: Գաղղիական ծովային զօրութիւնը ունի իր նաւական պատերազմի յատուկ ծրագիրը: Գաղղիա այժմ ունի Միջերկրականի մէջ 15 զրահաւոր, մինչդեռ Անգղիա միայն 10 հատ ունի նոյն ծովուն մէջ: Ուր որ հարկ է, սկսած են ըլլալ նորոգութիւնք: Պիեղիս պիտի ունենայ ամբարտակ մը, որպէս զի պատերազմի ժամանակ իր մուտքը շխափառուի, ինչպէս եղաւ ի Սանդիսիոյ: Զօրաբաժինք պիտի զրկուին ի ֆորսիքը և Ափրիկէ, ինչպէս նաև Գաղղիոյ ծովային քաղաքները: Գաղղիոյ ծովեզերեայ սահմանները ճշմարիտ ազգային սահմանադրութիւն ըլլալով, զանոնք պէտք է պաշտպանել ինչպէս Վոս լեռները: Գաղղիա կ'ուզէ և պիտի պահպանէ լրջօրէն խաղաղութիւնը մինչև այն օրը, որ իրեն պառտուոյն և շահուց սպառնալիք ըլլայ: Կ'ուզենք, — կ'աւտարէ պաշտօնեայն, — կազմակերպել մեր ծովային ոյժը, ոչ թէ յարձակելու, այլ յարձակում մը վանելու համար. (ծափահարութիւնք):

Թուլոնի արկածը. — Վիգդորիա թագուհին ամսոյս 11ին Ուինըզբըն մեկնեցաւ ի Սիսիի՝ Նիքէայի մօտ: Թուլոնէն անցնելով, կանչել տուաւ ենթաքաղաքապետը և յայտնեց իր ցաւակցութիւնը Լափուպրանի արկածի մասին: Իսկ սոյն արկածին պատճառին գալով, թէև որոշ տեղեկութիւններ կը պակսին, որովհետեւ բոլոր հոն ներկայ եղող անձինքը որ փոքր ի շատէ ականաւ տես ըլլալով արկածին՝ կրնային քանի մը

լուսաբանութիւն ընել, ամենքն ալ ընկնուեցան նոյն հարուածին տակ: Սակայն նենգամիտ պատճառի մը կասկածանքն ալ կարելի չէ բոլորովին մերժել: Եւ յիշատի թող ռաբիշ կասկածի առիթները, փեթերուպուրէն հասած հեռագրի մը համեմատ, «Մուրալիէֆ Ռուսիոյ արտաքին գործոց պաշտօնեայն» Բարիզ գտնուող Ռուսական դեսպանին հետադիր մ'ընդունեցաւ թուլոնի արկածէն քանի մը ժամ տառջ, որով կը ծանուցուէր իրեն՝ դաւակցութեան մը զոյրութիւնը, միևնոյն ժամանակ օգ հասնելու համար Թուլոնի և փեթերսպուրի վառօդանոցները: Մուրալիէֆ իսկոյն հեռագրեւ տուաւ նոյն տեղոյ պաշտօնատեսարարը, և յետոյ զինուորներու գունդով մը պաշարել տալով զնոնք տուաւ: Քանի մը ժամ վերջ կը պատահէր Թուլոնի արկածը հակառակ հոն ևս եղած նախագգողութիւններուն:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Պուլսի յայտարարութիւնքը. — Նշաւ նաւոր եղան նաև Պուլսի յայտարարութիւնքը, զոր բրաւ փեսարուար 28ին Ռայխըսդաքէ մէջ հաշուեցոյցի յանձնաժողովին առջև: Անկլու-Գերման զաշխակցութեան մասին, ըսաւ թէ ներկայ խնդիրներու հետ յարաբերութիւն չունի այն, այլ ապագայի մէջ պատահական զէպքերու հետ, որ և զաղտնի պիտի մնայ, մինչև որ նոյնօրինակ զէպքեր տեղի ունենան: Չինեղուն՝ Թիէնդսիին մէջ Գերմանացոյց զէմ բրած յարձակութիւն նըկատմամբ, յայտնեց թէ արդէն սպառնացեր է շինական տէրութեան, որ եթէ այդ եղելութեանց զրգոտները չպատժուին, և կամ ուրիշօրինակ զէպքեր կրննուին, Չինաստանի համար տանտածանր հետեւանքներ կրնան յառաջ գալ: Այս պատճառաւ, Գերմանիոյ վարչութիւնը, ուզելով զրկել Չինաստանի ծովերուն մէջ այն նաւերը, որ ներկայապէս կը գտնուին փիլիպպեանց առջև, Միացեալ Նահանգաց յանձնեց արշիպելագոսին մէջ գերմանական շահերու պաշտպանութիւնը: Ասկէ կը հետեին որ անհիմն են Գերմանիոյ և Միացեալ Նահանգաց միջև ծանր զբառաւորութեանց լուրերը:

Գուրիելմոս Բ. պաշտօնապէս յանձն առաւ Գերմանիոյ ծովային զօրութեան վերին հրաժանատարութիւնը, շնչելով բարձրագոյն հրամանատարի պաշտօնը, և ընդհանուր տեսուչ կարգելով Պալդիկ ծովու նաւատորմի վերին հրամանատար՝ Քէօսդիք ծովապետը, սպայակոյտին գլուխ՝ Պենտեման ծովապետը:

Ի Տ Ա Լ Ի Ա

Սան-Մունի խնդիրը. — Խառնիոյ խօսարանը ներքին խնդիրներով վեր ի վայր յուզուած առին, յանկարծ լուեցաւ Սան-Մունի միջադէպը: Խառնիա գրաւեր է — կամ աւելի պարկեշտ բառով վարձեր է — չինական Սան-Մուն ծովածոցը, հանդերձ յետակողման երկիրով (Hinterland), Խառնական լրագիրը որոնց վճիռները միշտ պատրաստ, գեղեցիկ ու տարուկ կ'ըլլան որ և է դէպքի նկատմամբ, արդէն իրենց թեր ուղիմ որոշումներն ըրած են այս մասին ալ: Դեռ հրկէ կ'ազմուած էին ափրիկեան և հակափրիկեան անուններով կուտակութիւններ, այսօր փոխանակեցին անոնց չին և հակաչին կուտակութիւնները: Սակայն պէտք էր քիչ մ'աւելի լուրջ ու խոհմտութեամբ գրել արտաքին քաղաքական խնդիրներու մասին:

Քանիվարոյ, Խառնիոյ արտաքին գործոց նախարարը, մարտ 14ի ժողովքին մէջ, զանազան երեսփոխաններէ հարցունելով, միջադէպին պատմութիւնը բրաւ, սկսելով անկէջ ի վեր, երբ Անգղիոյ և Ճաբոնի սիրալիր հաւանութեամբ, պատուել տուաւ Տէ-Մարգինոյ՝ փեքինի իտալական դեսպանին, վարձու խնդրելու Սան-Մունի ծովածոցը որ կը գտնուի՝ Ճաբոնի և Անգղիոյ սեփական երկու երկիրներու մէջտեղ: Տէ-Մարգինոյ առաջին ծանուցագիր մը ղրկեց Չինաստանի գործոց բարձրագոյն ժողովքին, — Չոսնկ-Լի-Եւալէն, որ իսկոյն ետ դարձուց զայն, բնելով որ չէր ուզեր բանակցութեան մանեղ, թէ և կը շարունակէր դարձեալ Խառնիոյ հետ բարեկամական յարաբերութիւններ: Խառնիոյ վարչութիւնը ամէն կարեւոր միջոցները մտածեւ էր՝ այս նախատական մերժումին հետուցում՝ պահանջելու համար, երբ լուե-

ցաւ որ Տէ-Մարգինոյ իր նախաձեռնութեամբ և չորս օրուան պայմանաժամով վերջնագիր մը ղրկեւ է չինական վարչութեան, վերոյիշեալ ծանուցագիրը դարձեալ ընդունել տալու համար: Խառնիոյ վարչութիւնը 24 ժամ վերջը լսելով այս յետին դէպքս, իսկոյն պաշտօնական ըրաւ Տէ-Մարգինոյ, և զինքը Հոովմ կ'անչեց եղածին հաշիւ տալու համար: Մինչև նոր դեսպանը հասնելուն, Սոլզաբրիի հաւանութեամբ, իտալական շահերը պիտի յանձնուին Մարտոնըշտ Անգղիոյ դեսպանին: Սակայն չինական վարչութիւնը դեռ չորս օրը չըրացած, ընդունեցաւ առաջին ծանուցագիրը, առանց դիտաւորութիւն մը յայտնելու՝ բանակցութիւնը յառաջ տանելու մասին: Խառնական ազդեցութիւնը բարձր բռնելու համար, տերութիւնը որոշեց հինգ զրահաւոր ղրկել հոն, փոխածովակալ Կրլնէի հրամանատարութեան տակ: Եւրոպական և Միացեալ Նահանգաց մամուլները բնիշխարապէս կը հաւանին որ Խառնիա Չինաստանի մէջ ապահովել իրեն ազդեցութիւն մը: Քիչ-քիչ-լու-Ֆենկ-լու, Լոնաթայի, փառիզու, և Հոովմ չինական դեսպանը, սրան զալտեան շարաթէ մ'ի վեր կը սպասուէր ի Հոովմ, վերջապէս ամսոյս 20ին հասաւ հոն, և նոյն օրը մէկ ժամու չափ խօսեցաւ Քանիվարոյի հետ: Կ'ըսուի թէ չինական դեսպանը շատ նպաստաւոր երեցեք է Խառնիոյ խնդրանքին:

Լեւոն ԺՊի Ռիւանդուտիւնը. — Մարտի սկիզբը լուեցելով որ Մ. Քահանայապետը ծանր հիւանդ է, և թէ հարկ էր հատում մ'ընել, այս լուրը ամէն տեղ, ի նկատի առնելով իր խորին ծերութիւնը, կարծեւ առեւեր էր որ իր վերջի օրերը հասած ըլլային: Բայց Մաժժոնի և Լափիոնի ճարտար բժիշկներուն, և մանաւանդ իր ջղային զօրաւոր կազմութեան շնորհիւ, վեհափառ Ներսէսին անվտանգ անցուց այդ ցաւալի ճգնաժամն ալ: Շատ տարիներու (ad multos annos!):

Մ Ի Ա Տ Ե Ա Լ Ն Ա Ղ Ա Ն Գ Բ

Աւերիկացիք եւ փլիպպեաններու կռիւր. — Եթէ լատին ժողովուրդները՝ ստեպ ցե-

դական յատուկ հիւանդութիւններով կը տագնապին, սակայն երբեմն Անկլոյ-Սաքսոններն ալ ունին իրենց տագնապները, զիսացանքը, թէ ան ալ վերջիններս միշտ իբր ատող մտքի օրինակ կը բերուին առաջիններուն: Ինչպէս Անգղիացիք ի Սուտան, նոյնպէս Ամերիկացիք ալ Փիլիպպիններու մէջ հանդիպեցան կարծր ոսկրի մը: Այդ տիպար — ժողովուրդը, որ բոլորովին հակառակ է գերութեան և զինուորական դրութեան (Militarisme), այն որ անցեալ տարի իբր ազատիչ ժողովուրդներու համարուած էր, հիմայ եղած է ժողովուրդ մը զինուորական, տիրապետող ու բռնաւոր: Վոշինկընի ծեղակայաբ, միայն 4 քուէից առաւելութեամբ, հաստատեց վճիռ մը, որով Փիլիպպինները ոչ եթէ պիտի միացուին Միացեալ Նահանգացի հետ, այլ պիտի ենթարկուին առեւտրամանակեայ վարչութեան մը, յարմար բնակչաց ներկայ վիճակին, զիրենք տակաւ պատրաստելու համար ինքնավարութեան: Շատ շնորհալի գիւտ. վարուիլ ժողովրդեան մը հետ հրացանով ու թնդանօթներով, զուարճանքի ալիքով զիւրեր և հոնձքեր, կողոպտել տուններ, մինչդեռ պաշտօնեաներն ալ կը դիտեն զանոնք քմծածողով և ծխազանիւր բերնին մէջ, միով բանիւ, ընկճել երկիր մը, իրեն . . . անկախութիւն ստրվեցնելու համար: Ու մինչև երբ պիտի տէ՛ այդ համակրութիւնը, զուցէ այնչափ՝ որչափ Եղիպատոս անգղիացեաց ձեռքին տակ: Բայց «Ֆիլիքինոսները» կ'երևին թէ կ'ուզեն անտիկական մնալ այս բաներուս, ու կը շարունակեն զեն ի ձեռն զիմադրել Ամերիկացեաց. և արդէն երիտասարդ Ակուինալոյ քիչ մը մոռածել կու տայ Աւստրալիոյ հասարակապետութեան:

Լրագիրները ծովակալ Տիուէյին կ'ընծայեն հետեւեալ խօսքերը. «զուցէ իմ ճակատագիրս է հոս մնալիլ. կը սկսիմ հաւատալ որ բնաւ ալ հայրենիքս պիտի չտեսնեմ: Պատերազմը հիմայ այնպիսի կերպարանք մը կ'առնու, որ չեմ կրնար մոռածել հայրենիք զառնալու վրայ»:

Հոնկ-Գոնկէ ուղղուած անգղիական հետազոտի մը, որ Վոշինկընէ հասած հեռագիրներու պէս լաւատես չի թուիր, կը հա-

ւատէ Ամերիկացեաց անկարողութիւնը՝ ստուգելու «Ֆիլիքինոսներու» զօրաց թիւը, ծրագիրը և միջոցները: Միացեալ Նահանգացի սպան ալ կը յայտարարէ որ ինքը չի յուսար իր կեանքին մէջ պատերազմին վերջը տեսնել:

Ֆիլիքինոսիցիք խոյս կու տան կանոնաւոր պատերազմներէ, նախապատելով միշտ արձակագործի կոնիները (guerilla) եղեգնուտի մէջ, ուր ամբողջ անձանց տեղ չկայ իրենց համար, և պիտի շարունակեն նոյնպէս, մինչև ինչայ վերջին Գաղաթ: Ամերիկացի բանի մը զօրավարներ՝ ապստամբներուն թիւը կը համարեն 20,000էն 40,000, — 30,000ի չափ հրացանով:

Ձ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Ձինաստանի ներքին կացութիւնը. — Անիշխանութիւնը մուտք գտած է տէրութեան պաշտօնեաներու ամեն դասակարգին մէջ, որու մասին անցեալ ամսոյն վերջերը Երվանտի առաւելան թերթը կը գրէ. «Ձինաստան այլ եւ Շէյքսպիրեան հոշակաւոր երկայրաքանութեան առջև կը գտնուի. քույր կամ լրջալ»:

Ձինաստան թէև մինչև ցարդ կը յամանի դիմադրելու քաղաքական սկզբունքներու խուժման, որոնք անընդհատ կը բաղին իրեն խարխուլ պարիսպները, ուր կ'ուզէ նա փակուած մնալ, սակայն այլ ևս դատապարտուած է նա կու տրուելու ծովային մեծ պետութիւններէն, որոնք այդ դիմադրական տշխարհքին մէջ պաշտպանելու անթիւ շահեր ունին: Երկնային կայսրութեան փրկութիւնը կայացած է յառաջդիմական գաղափարները ընդունելուն մէջ, ուրոնք Էւրոպա անընդհատ կը թելադրէ իրեն: Սակայն վերջին դէպքերը կը ցուցնեն որ չինական ժողովուրդը դեռ շատ յամառ ուղղութեամբ կը կողմ բաղադրականութեան դէմ, և Էւրոպացեայն դէմ իր ունեցած ատելութիւնը շատ եռանդուն և խորին է: Սակայն այս վերջինս, պատրաստուելով զեղին ցեղի դէմ անհոն կողմին, պէտք չէ յուսահատիլ վերջնական յաղթութենէն:

Ձինաստան անուրդի Բանուաթ. — Դայմ

լրագիրը կ'ըսէ թէ «Չինաստանի բաժանու-
մը մեծ աշխատանքներ սկսած է», և կը խնդրէ
որ Անգլիան շուտով ձեռք դնէ իրեն ինկած
բաժինին: Գերմանացիք ալ Չին-Պոնիկի մէջ
կատարուած խռովութիւնները առիթ կ'առ-
նուն՝ իրենց ազդեցութիւնը տարածելու նոյն
գաւառին մէջ: Ճաբոնի ալ կը խնդրէ ունենալ
ի Ֆու-Չէո՝ մարտերու յատուկ վերակացու
մը: Պեկինի ևս իրեն համար կը պահանջէ
Հան-Քէնի շնորհումը: Թէ և լուրը պաշ-
տօնապէս հերքուեցաւ, բայց դարձեալ կը
շարունակուի կարծուիլ որ նաև Աւստրիա-
Հունգարիա առաջարկները ըրած է Երկնային
կայսրութեան ծովեզերքին վրայ տառնալու
համար ազդեցութեան սահմանագծոյ մը:
Ռուսիոյ կողմանէ Գորէլայի զբաղումը վե-
րահաս կը թուի: Անգլիա առ այժմ գրա-
ւած է Միտոյ-Պաոյ՝ փեքիլի ծոցին մէջ՝ որ
կը գտնուի Բորոյ Արմորիի հանդէպ: Այս-
օրուան օրս Չինաստանի կը մնայ միայն 200
միլիոն ծովեզերք:

Սան-Մունի խնդիրը. — Տես խաղիոյ
առնին մէջ:

Փ Ո Ք Ր Տ Ե Լ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Տեղոյն սղութեան պատճառաւ, կը օտի-
պոնք համառօտօր միայն յիշել փոքր Տէ-
րութիւններու քաղաքական կեանքը, որ սա-
կայն ոչ ինչ նուազ բեղնաւոր եղաւ այս ա-
միս: — Ի Յունաստան 19ին քաղաքական
ընտրութիւնք տեղի ունեցաւ: Տեղանիսի
կուսակցիները բողոքողին շանխուեցան՝
Աթէն և ամէն գաւառներու մէջ: — Քա-
ղաքական աշխարհը այս ամիս զբաղեցաւ
նաև Ռուս-Աւստրիական միջադէպով, որ ա-
ռիթ տուաւ Ծառտովսքի ռուս պատգամաւորին
Պելլերատէն մեկնելու: — Փետր. 20ին,
Յիւլետէի ժողովքը Գեորգ իշխանին նախա-
ղահութեամբ բացուեցաւ ի Քանէա, և հիմայ
կընտէր սահմանադրութեան ծրագրին վրայ
կը վիճաբանուի: Կ'ըսուի թէ ծրագիրը ըն-
դունելի պիտի անցնի ամենափոքր սրբազրու-
թիւններով. յետոյ պիտի հաղորդուի այն
Քանեովորոյ արտաքին գործոց պաշտօնին,
որ Հոռովի գաղլիական, անգղիական և ռուս
զեսպաններուն հետ զայն քննելով, անոր

վերջնական հաւանութիւնը պիտի տայ: —
Սպանիոյ մէջ Սակասդա պաշտօնարանը իյ-
նալով, պահպանողականները իշխանութեան
հասան, որոնց գլխաւորը Սիլվելա, լիպուհ-
ւոյն յանձնարարութեամբ, շուտով կազմեց
նոր պաշտօնարանը, որ քիչ մը կզերակա-
նի գոյն ունի՝ կ'ըսեն: Պաշտօնարանին ա-
ռաջին գործն եղաւ լուծել գորգերը: — Վեր-
ջապէս մայիս 18ին Անլիսկէցութեան Ժո-
ղովը պիտի գումարուի ի Լա Հէյ, Հոլան-
տիոյ Հին Հրապուրիչ մայրաքաղաքին մէջ:
Առ այժմ աւելութիւններու միջև եղած բա-
նագնացութիւններն կ'իմանանք որ յայտա-
գրին քանի մը կէտերը դուրս ձգուեր են՝
անիրականալի երկնայուն պատճառաւ: Ժո-
ղովը հաւանականաբար դեռ ուրիշ կէտեր ալ
դուրս պիտի թողու. և այն ատեն ինչ պիտի
մնայ երիտաւարը Չարին փառաւոր ու վե-
հանձն յայտաբերէ: Սուղպըրի ևս, իր՝ վեր-
ջերս ըրած յայտարարութեանց մէջ, նշա-
նել կու տայ որ ինքը շատ բարեկալով չի
տեսներ ժողովին արդիւնքները: Վերջերս կը
խենք որ բարձրագոյն դուռն ալ իր ընդու-
նեկութիւնը զրկել է Չինեկէցութեան ժողո-
ւին, վերապահելով միայն քանի մը կէ-
տեր . . .

Հ. Փ. ԵՄՍԻԿԵՐ

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

Լիւզերն Հ. Ա. — Կը ցաւինք զՁեզ չգո-
հացեցնուաւ. նպատակ լռեցինք բերքն com-
promettre բնէրա:

Ուսմէնպուրի Ա. Բ. — Ահաասիկ Ձեր
փափագածնք մի օրինակ. յոռաւք հաճոյ
կ'ացնի:

Էջմիածին Հ. Ա. — Ազնիւ աշխատակից. Ձեր
Մոռալայի յօդուածն արդեւ մեր բերքի
Մարտ պրակին մէջ պիտի ենք հրատա-
րակել, կը փոքրանք շարունակութիւնն նաև
Մայիսի պրակին մէջ գետեղելու: Ձեր
խնդրած քառի ստորագրանքնուն մասին
անշուշտ չիտիւն տեղեկութիւն կրնաք գտնել
Սիսականի մէջ. հը 496. և Ձեր ակնա-
կած քառասորի յօդուածին (Բազմալիւլ
1886. հատոր ԽԳ. հը 215) մէջ: Այդ
տետրի պատգարութիւնն սպասած ըլլալով
Ձեզ մի օրինակ խառնելու փափաքնիւ
չիքցանք կատարել: